# 40. ԱՇԸՂԸ

Մեհետ մին աշըղ ուրա̈ն շիգյիրդներեն նհետ քյնամ ա շեներքը շոռ կյամ։

Մին շենում մին լա̈վ սերուն հարթն ա տըեսնում, սկսում մտածելը։ Ասում ա.— Տըեսնաս, վեր ըստա էսքան սերուն ա՛, ըստըրա նշանածը հո՞ւնց կինի՛։

Ուրուգյունը վեր մթնում ա, հունց ա պտահում, քյինամ ա տահանց տանը ղոնաղ ընգնում։ Տըեսնում ա տահանց տոնը մին ամպետք, շո̈րերը ճղըրտած մարթ եկա՛վ, նի մըտա՛վ, պարիօր տվա՛վ, նստի՛ց։ Աշըղը գյիդա̈ց, թա հըևանն ա, եկալ ա զրուց անին։ Ամմա վար քշերը ըտեղ քոն իլա̈վ, նոր գյիդա̈ց, վեր տա ընդըրա նշանածն ա։ Էտ աշըղը էրվից, խըրավվից, սազը եր կալավ, ըտեղ մին խաղ կապից, ասից.

Նա սարերեն լա̈վ խոտ ա,
Ծաղիգյ-ծաղկունքի վըետ ա,
Քոն իլ, եր կաց, բախտ օղե,
Կեղեցկոթունը սոտ ա...

— Էտ հո՞ւնց ա, տու էտքան սերուն, ղա̈շա̈նգյ կնեգյ, ամմա քու նշանածտ ըտհենց փիս ա։

Հարթնը ասից.— Աստված, վեր լոխճին բախտ ա պիժենալ, իմ պաժինս էլ էս ա ընգա̈լ, յըես հի՞նչ անիմ։

Էտ աշըղը ըտեղ մնամ ա՛, թա̈ կըլխան ծեռք եր կալած հիշտեղ ա քյնա̈՛մ, մինչև մհենգյ էլ գյուգում չը՛նք։